



ԼՐԱԳԻՐ

Տարեկան գինն է 150 դր. և
վեցամսեայ „ 80 „
Մեկ ծանուցումը տալին 5 դր. և
Մտորագրութիւնները կանխիկ են:
Մտորագրութիւնները ամեն ամսոյն ինք
եւ 15ին կը սկսին:

Իւրա երբայիք լրագրութեան համար
ծախքը առնողին վրայ է:
Լրագրաց վերաբերեալ հարցի կամ որ
եւ ինչ գրութիւն Լրագրին պիտի
ուղղուի. եւ ամեն համարուն ծախ
քը խրկողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 31 ՄԱՐՏ

ՊՐԻՆՏԵՐՆ ԶԵՆՈՒԴԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐԸ

Մարտի 6 ապրիլ.

Յորեն կիջնայ, Բուսնի եւ վառնա 26.
Պարկազ 271/1: Մետաքս եւ խողակ կիջ-
նան: Սուսամ 60. Փոխանակութիւն 23 701/2
Յոնո 69, 90. Քոնսոլիտ 94.

Լոնդոն, 7 ապրիլ.

Պամանեան փոխառութիւն. հինը 85 3/4.
Նորը 70 1/2. Միլէս 65. վերջինը հարկերին 2
գլուխ. Քոնսոլիտ 93 1/2.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ Օրենսդրական ժողովը վեր-
ջապէս աւարտեց կայսեր գահախօսու-
թեան պատասխան ըլլալը ուղերձին վե-
ճարանութիւնը, և ամսոյ 11/23ին օրը
յիշեալ ժողովին կողմէն ընտրուած պատ-
գամաւորութեան մը ձեռք օրը ուղերձը կայ-
սեր մատուցուեցաւ:

Հռոմի գաղղիական դեսպան Լա-
վալէթ մարքիզը Հռոմէն Գաղղիա վերա-
դարձաւ. Արտիսթ թէ ասոր պատճառը
Հռոմի գաղղիական զօրաց հրամանատար
Այոյն զօրապետին ու դեսպանին մէջ վեճ
մը ծագած ըլլան է, որուն վրայ Լաւալ-
լէթ մարքիզը վշտանալով՝ Գաղղիա դար-
ձեր է, և մէկ մ'ալ Հռոմ չպիտի դառ-
նայ եղեր քանի որ Այոյն զօրապետն հոն
մնայ:

Ուրիշներ ալ կրնան թէ Լաւալէթ մար-
քիզը Պապին հետ տեսակցութիւն մը ը-
նելով, Պապը գանգատեր է Գաղղիոյ կա-
ռավարութեան թէ Քարտի մէջ նա-
հատակեալ կրօնաւորներուն ի թիւս ե-
րանելեաց դասուելուն առթիւ Գաղղի-
ոյ եպիսկոպոսներուն Հռոմ երթալը ար-
գիւր է մինչև որ իրմէ հրաման չտա-
նան. Լաւալէթ մարքիզն ալ պատաս-
խաներ է թէ « Այսպէս արդարեւ Հռ-
ոմի աթոռին և Գաղղիոյ մէջ եղած կը-
քանական քաջաբերութեան գործադրու-
թիւնն է. և ասկից առիթ առնելով՝
Լաւալէթ մարքիզը դիտողութիւն ըրեր է
Պապին թէ Հռոմի Եթոռը պէտք է յոր-
դորէ Գաղղիոյ մէկ քանի եպիսկոպոսները
որ աւելի անհաճութիւն չուզեն իրանց
և անոր կառավարութեանը: Եւս դիտո-
ղութիւնը Պապին անհաճոյ թուելով պա-
ղովթիւն ինկեր է Հռոմի արքունեաց ու
դեսպանին մէջ: Այսպէս ալ մէկ կողմանէ
իրաց վեճակին դժուարութիւնները նկա-
տելով, միւս կողմանէ իւր դեսպանին հետ
ի մօտոյ խօսակցիլ ուղերձ, զանի Գաղ-
ղիա կանչեր է:

Հռոմէն լուր կուտան թէ մարտ 14/26
ին Պապը Քարտի մէջ նահատակեալ երեք
ձիգուիթ քարոզիչներ ի թիւս սրբոց դա-
սակարգեր է: Եւս առթիւ Եթոռն սրբ-
բազմութիւնը ատենաբանութիւն մը ըն-
ելով՝ ըսեր թէ « Իր աշխարհական իշխա-

նութիւնը հաւատոյ մաս չէ. այլ՝ իրաց
այժմեան կարգին մէջ և դաւառին կամ-
քը՝ աշխարհական իշխանութիւն մ'է. Եւ
ձախաղէս հարկաւոր է եկեղեցւոյ գլխին
անկախութեանն ու ազատութեանն:

Վերիկայէն եկած լուրերը հիւսիս-
կանաց նորանոր յաջողութիւնները կը ծա-
նուցանեն. Միացեալ Մահաւոյց (հիւ-
սիսականաց) Լինքոլն նախագահը պատ-
գամաւոր մը զրկելով երեսփոխանաց խոր-
հրդարանին առաջարկեց որ հարաւային
նահանգներէն որոնք որ գերեաց պատու-
թիւնն ընդունին, դրամական հատուցում
մը ըլլայ անոնց: Եւս առաջարկութիւնը
խորհրդարանէն քուէից առաւելութեամբ
ընդունուելով, Վերիկայի ինքիւր նոր
կերպարանք մը առաւ. փասն զի ասով
հարաւայնոց դատը ի սպառ կը կորսուի
Եւրոպայի քաղաքակրթեալ ազգաց առ-
ջև, և պատերազմն ալ շուտով վախճան
կրնայ գտնել:

Վերիկայէն եկած լուրերուն նայե-
լով, հիւսիսայնոց և հարաւայնոց մէջ
նաւական պատերազմ մը եղեր է, որուն
մէջ հարաւայնոց երէք զբաւառնող վոյե-
ր շողեւանները աստիկ հարուած մը տուեր
են առաջիններուն եօթը մեծ Ֆրգաթն-
ներուն:

Եւս նաւական պատերազմին վրայ
Օրինիսի Մարիմալ լրագիրն հետե-
ւալ ուղադրութեան արժանի խորհրդա-
ծուութիւնները կրնէ, որոցմէ կը տեսնուի
թէ տերութեանց նաւական զօրութիւն-
ներն հիմնական փոփոխութիւններ կրե-
լու հարկադրուած են:

Մեծ փորձ մը եղաւ այս օրերս
Միացեալ Մահաւոյց մէջ, և այս փոր-
ձը կը ջուշքնէ Եւրոպայի թէ ունեցած
երեք չորս հազար միլիոն Ֆրանքի նաւա-
կան շինուածոց՝ այն է պատերազմական
նաւերուն արժեքը բոլորովն կամ մեծ
մասամբ կորսուած է:

Խօսքերնիս այն պատերազմին վրայ
է որ այս օրերս Վերիկայի Քէյմս դե-
տին վրայ եղաւ հարաւայնոց երեք զը-
րահաւոր շողեւաններուն և հիւսիս-
կանաց եօթն շողեւաւոր նաւերուն մէջ,
որոց մէկ քանին մեծ պատերազմական նա-
ւեր էին:

Եւս շուտով ընցած կուտին մէջ
տեսնուեցաւ որ մէկ երկաթապատ նաւ
մը թշնամոյն պատերազմական շողեւա-
ները ծակեց, ընկղմեց ու գերի բռնեց՝
առանց ծանր վնաս մը կրելու, թէ և
թշնամոյն Ֆրգաթններն իրենց բոլոր
թնդանութիւնը կատաղաբար անոր վրայ
կը պարպէին:

Եւս առաջին անգամն է որ զբաւա-
ւոր նաւ մը պատերազմի մօտաւ, և ար-
գիւր համոզեց է: Եւրոպայի ծովա-
յին զօրութիւնը բաղկացնող 2560 պա-
տերազմական նաւերն այս օրուան օրս
յարդ կամ ապակի կը համարուին Ալա-
ռի պէս զբաւառնող նաւի մը դէմ որ 900
հազար քիլոյրամ երկաթով պատեալ է:

Մէկ զբաւառնող նաւ մը կրնայ ամ-
բողջ նաւատորմի մը խորտակել: Եւս
առաջինութեան արհեստը հիմնովին տալին
ի վերայ եղաւ: Եւս շողին նաւատորմա-

նութեան գործածուելն յառաջ եկած
յիշատիութեանն աւելի մեծ, աւելի
արմատական յիշատիութեան մ'է: Եւ
զեւարժ նաւերը շինուած ժամանակը ա-
ռաջատուոր նաւերն ալ մնացին և շո-
ղեւաններուն հետ մէկ անդ գործ կրնա-
յին տեսնել: Օրահաւոր նաւերն ընդ-
հատուին թէ՛ հին շողեւաններուն և
թէ՛ առաջատուորներուն վերնալը կամ
փոխարկելով կը պահանջեն:

Միւսից զատ ուրիշ նկատելք ալ
կայ: Եւսարհիս բոլոր ծովերուն վրայ
պարտող վաճառական նաւերուն թիւը
220000 կը հաշուեն: Եւս, երկաթեան
թիւ ծախքն պատերազմի ժամանակ զբա-
ւառնող նաւ մը ծովապատուութեան եւ-
նէ: Եւս զարհուրելի թշնամին գեւա՛ ա-
ռաւորական մեծ նաւատորմի մը ան-
պաշտան կը մնայ: Վերին ալ գերի կը-
թան իրենց բոլոր մարդոցմովն ու ապրանք-
ներով, թէ որ զբաւառնող թշնամին ա-
ւելի լաւ չհամարի այն բոլոր նաւերն ու
մէջի մարդիկ ծովուն յատակը իջեցնել:

Բերնի երկաթապատ նաւերուն
գիւտը հիմնական նշանակութիւն մը կը պա-
հանջէ ծովային իրաւապետութեան և ա-
սոր նախաշաղկի պէտք է ըլլայ պատերազ-
մական ծովապատուութեան բոլորովն
վերնալը:

Միւսից խորհրդարանն արդէն զբաղի
սկսած է այս նաւական կարեւոր խնդրոյն:
Եւսարկութիւն եղաւ որ Միւսից ծո-
վերեքներուն պաշտպանութեանը համար
շինուած ծովային փայտեայ մարտիկներն
ու թնդանութիւնը ըստերը մէկ կողմ
ձգուին ու անոնց տեղը զբաւառնող մանր
շողեւանները շինուին Վերիկայեց վերո-
յիշեալ նաւամարտին մէջ գործածած
ներուն նման:

Միւսից կառավարութիւնը՝ առանց
մեկէն ի մէկ ընդունելու այս առաջար-
կութիւնը, խօսք առաւ առ այժմ ու-
շաղկի ընտելութիւն մը ընկելու առաջարկ-
եալ կարեւոր խնդրոյն վրայ որ նաւական
արդի գրութիւնը հիմնովին կը տալայէ և
ամբաւ ծովապետութեան կը բանայ ծովա-
յին տերութեանց:

Մեքսիկայէն եկած վերջին լուրերուն
նայելով, եւրոպական երեք տերութեանց
և յիշեալ հասարակապետութեան մէջ
ծագած վեճը խորացուցեալ լուծուե-
լու յոյսեր կը տեսնուին:

Հասարակապետութեան կառավա-
րութիւնը եւրոպական տերութեանց ա-
ռաջարկած հիմնական պայմաններն ընդու-
նէր է: Հետեւաբար Մեքսիկա գաղտը եւ-
րոպական տերութեանց հրամանատարնե-
րը պայմանադրութիւն մը ընկելով Մեք-
սիկայի կառավարութեան հետ, իրենց
զօրերը պիտի մեկնին հոնէ: Միւսից
այլը Միւսից պիտի դառնան: Սպա-
նիացւոց զօրքերուն մէկ մասը Քուպա
կղզին պիտի երթան: Գաղղիացւոց զրկած
օգնական զօրականներն ալ առանց նաւե-
րէն դուրս ելլելու Գաղղիա պիտի գառ-
նան կրուի:

Միւսից, Եւրոպայէն եկած վերջին
լուրերը կը ծանուցանեն թէ, Գաղղիոյ և
Սպանիոյ կառավարութիւններն այս կտր-

գաղթութեան համութիւն չտալով՝ հրաման
կընեն իրենց ծովային և ցամաքային զո-
րութեանց հրամանատարներուն, որ մին-
չև Մեքսիկայի մարտադաւաճ զանա-
վեքսիկայի կառավարութեան հետ ոչ
բանակցութիւն ընեն և ոչ կարգադրու-
թիւն: Ար հարձուի թէ այս հրամանը մին-
չև որ Մեքսիկա համար՝ գաղտից զօր-
քերն անկէ մեկնած կրնան:

Քանի մը տարիներէ ի վեր Չինաս-
տանի երկիրներն արեւմտեան երկող ու աւերող
ապստամբութիւնը վերջապէս Եւրոպայ-
եց ալ հանդուրժութիւն աւերով, կերելի
թէ եւրոպական մեծ տերութիւնները պի-
տի հարկադրին իրենց զէնքերը Չինաս-
տանի ապստամբներուն վրայ դարձուե-
լու:

Գաղղիական Քուէս լրագիրն մէջ հը-
րատարակուած հետեւեալ հետաքրքրաշարժ
նամակը որ Չինաստանի Շանհայի քաղա-
քէն գրուած է, այս հաւանականութեան
հաստատութիւն կուտայ:

« Ելնիլի քաղաքն ապստամբներուն
ձեռքն իյնալէն ի վեր, դէպքերն այնպիսի
սարսափելի ընթացք մը բռնեցին, որ այս
օրուան օրս հարկադրած ենք իրարու
հարցունելու թէ Չինաստանի այս ամե-
նէն հարուստ և ամենէն բարեգում ջա-
ղաքը մինչև յաջորդ սուրհանդակին ծառ-
բայ երած ատենը կանգուն պիտի մնայ:

« Եւրէն տարտամ կերպով մը գի-
տելնք թէ ամերիկացի քարոզիչները, որ
ապստամբներուն կողմը բռնած են, խրատ
տուեր են անոնց որ Չինաստանի հարա-
ւակողմը քային, ուր առատ պաշար կը-
նային գտնել թէ՛ ուտելիքի և թէ՛ պա-
տերազմական միջոցներու:

« Եւս ներքաւոր խրատին վրայ էր որ
ապստամբներուն ապագանարար հեղեղը
նախ Ելնիլի փրայ քաղաք, ուր ոչ կայ-
սերական և ոչ դաշնակցից գիւմարու-
թեան պատրաստուած չէին: Բայց հոն
ապստամբները լքեալ քաղաք մը գտան՝ ուր
ոչ պաշարի միջոց կար և ոչ գետին մէջ
նաւեր կային. ուստի մեկիւր առնելով
Միացեալ Մահաւոյցէն դիպուածով
եկած քիչ մը վառօդն ու ռումբերը որ
գնեցին, ապստամբները ամերիկացի քարո-
զիչներուն յուսացուցած առատութիւն-
ները չշտան: Ելնիլի մէջ:

« Եւս ժամանակը յայտնի եղաւ ա-
պստամբներուն համար Շանհայի վրայ
քաղելու հարկը, որ հարաւային քաղաք-
ներուն մէջ միակ հարուստն է, ներքին
և արտաքին վաճառականութեան կերպուն
է, և կայսերական զօրաց պէտք եղած ամեն
կերպ պատերազմական պաշարներուն մը
թերանոյն է:

« Հրաման զրկուեցաւ ապստամբաց զա-
նազան գունդերուն որ Սուչուի և Հանկ-
չուի դաւառներն ու շրջակայ երկիրները
արշաւէր էին, որպէս զի ճամբայ ելնէն
« Ելնիլի քաղաքը գունդերուն ալ հրա-
ման եղաւ որ Շանհայի վրայ քաղին այն
կերպով որ այս ամեն դուռները մի և նոյն
ժամանակի մէջ հոն հասնին: Բայց այս
մեծ շարժումներն այնպէս զգուշութեամբ
զաղանի պահուեցան ապստամբներուն հոս
ունեցած բազմաթիւ կողմնակցներէն, որ

մենք ամենաթեթեւ կատարած մը անգամ չունենինք մեր քաղաքին ու վաճառանոցներուն սպառնացող մերձահաս վտանգէն :

« Միայն ամառը (յունուար) 11ին էր որ վտանգին յառաջնորդաց չարաքաշակ նշանները մէկէն ի մէկ մեղ արթնցողին՝ վտանգին մօտենալը մեզի գուժեղով :

« Ըստ օտուտի կանոնի՝ հորիզոնին վրայ ծուխերու սև սլանքեր տեսնուելով՝ զեղերուն ու աղարակներուն հրկիւղութեանը վրայ տարակոյտ չթողուցին : Այս օրին մօտ խորունկէն հրադրութեանը ու լոտուտներ լսելի սխան, և քիչ մը ետք զեղացւող բաղաժութիւն մը մանաւանդ կանանց և աղայոց՝ ստիպաւ Շանկայի կը դիմէին արտաթափած և շունչերնին հաստած, խոշոր ծրարներ հետերնին բերելով, որոց մէջ իրենց համբերձներն և ու տեղերը լցուցեր էին գաղթական գացող ժողովուրդի պէս :

« Ապստամբներուն ասանկ յանկարծուտ մօտենալը մեղ շատ հիացուցորով հետև դեռ մօտ ժամանակներս իրենց մեծերը խօսք տուեր էին Մարդաստեղ և Պապիստեղ հրամանատարներուն թէ Շանկայի դէմ թշնամական դործ մը չի պիտի ընեն երբեք : Բայց կերելի թէ իւրենց բարեպաշտ խրատատուներուն (աւերիկացի բարոյաշէն) թերազրութեամբը խորութիւն մը դրած ըլլան Շանկայի պարագայատ քաղաքին ուր շինացի վաճառականները միայն կը բնակին, և իւրապէս թաղին մէջ, որ քաղաքին և գետին մէջ տեղն է : Շանկայի այս մասին համար ապստամբներն ամեն կերպ անհաճութիւն ու սպառնալովութիւն կը խոստանան, հաստատելով թէ օտարազգեաց հետ սիրով ապրիլ կուզեն : Բայց շինացւոյ բնակած քաղաքի իրենցնաւական դործողութեանը համար ամենակարեւոր կէտ մը ըլլալով, անպառաժա պիտի առնեն :

« Եսանկ յանդուգն ձեռնարկութեան մը յաջողութիւնն ապահովելու համար, յարձակող զօրաց թիւը 100.000 հասուցած են, որոց մէկ մասը եւրոպական զինեղերով զինեալ են, և բազմազունը հեծեալներ ալ ունին որոց համար կրտսի թէ անպարտելի կերպով անվահերք են : Եւս անհրաժանգ աւաղակներուն անթիւ ջոկըր պատերազմի առաջնորդերը համար ապստամբները երկու հաւրելի չափ եւրոպացի զինուոր դասած են, որոնք անշտան տերութեանց նաւերէն փախած նաւատիրներ կամ հին ծովապատաններ են, զոյ աւագակ մարտիկ, որոնք զանազան աստիճանի զինուորական պաշտօնակարներ ու եւրոպական զինուորութեան ուսուցիչներ եղած են ապրատմանը թանկանի մէջ :

« Եսանկ ծանր վտանգի մը առջև չենք կրնար վարանիլ : Եւրոպացիները խիստ մեծ շահեր ունենալով Շանկայի չեռական քաղաքին մէջ՝ հարկադրուած են զանի ամենայն զօրութեամբ պաշտարանելու :

« Խիստ բարեբաղդաբար չոր ծովապետն հոս գտնուելով, խիղիւն ամբողջութեան դործողութիւններու ձեռք գտնուելու, և քաղաքին տկար կողմերը խորունկ իրաւներով պատեց : որով մեր թնդանօթակիրները կարող կըլլան պարտելու և թնդանօթակիրներն ալ թշնամեաց զէ՛հ հզօրեղապէս դործելու :

« Երբ պահապան զօրաց թիւը արդէն 2000ի կը հասնէր : Բայց հոս գտնուող բոլոր եւրոպացիները՝ առանց ազգի հասակի և աստիճանի խորութեան զէնք առնելով՝ կամաւոր զօրաց զունդ մը կազմեցին հասարակաց պաշտօնականութեանը համար :

« Ենթադրելով որ այս յուլեւուտ ծով մեր զօրութիւնը 3000 մարդու հասնի, տակաւին խիստ քիչ է 100000 արեանաբուռ աւաղակներու բազմութեան մը դէմ : Բայց մեր մարտիկներուն, զինուորական ճարտարաբուհեա շինութիւններուն ու նաւական պաշտարանութեան մէջ ջոկներուն նշանակով զինուորական արուեստին հմուտ եղբայրներ համոզուած են որ

կարող կըլլանք՝ ապստամբներուն ջոկըները վանելու, մանաւանդ թէ որ գաղղիական նաւախումբը ժամանակին հոս հասնի, որուն համար կըսուի թէ Սայկոնէն ձամբայ ելեր է մեզի օգնութեան հասնելու համար :

« Ուրեմն, ներկայ պարագայներուն զօրութեամբ, եւրոպական քաղաքականութեան տկարացումը հարկադրուած է շինատանի սպառնալովութեան նկատմամբ որոշ զիջք մը բռնելու : Որչափ ալ տեսականապէս չեզոք մնալ ուզէ շինատանի տերութիւնը պատաստող մեծ կրտսի մէջ, այսու ամենայնիւ քաղաքականապէս կառավարութեան կողմը բռնելու կը հարկադրի՝ ապստամբներուն անակրկիտ յարձակումը զինուորութեամբ վանելով :

Բայց թերեւս Շանկայի քաղաքն ու նաւահանգիստը ազատեղ չեն ալ մեր միջամտութիւնը չկրնար յառաջ քաշել շինատանի ներքերը, հետեւաբար ընդհանուր քաղաքականութեան վիճակին դժուարութիւնները պիտի շարունակեն թէ՛ շինաց կառավարութեան եւ թէ՛ զաշնակից տերութեանը (Մարդիկ և Պապիկ) համար : Հիմա սէտք կըլլայ որ շինատանի իշխանապետութիւնը վերջապէս ազգու կերպով դործելու ձամբան մտնուր կը մտնէ վերջը մեր քաղաքականութիւնը, եւ հզօր բանակ մը կազմելով սպարտաութեան կերպով միայն քաղաքն ու զանի ապստամբութիւնը խորտակէ : Գործադրաբար այժմեան կառավարութիւնը աւելի ժամայնաձառ ըլլալու և վիճարանելու միտում կը ցուցնէ՝ քան ազգու միջոցներ ձեռք առնելու, որով միայն կարելի է տերութիւնը մօտալուտ աւերումէ մը ազատել :

« Եւսօր, յունի 21, ապստամբաց զունդերը քաղաքէն մէկ ժամու ձամբայ հեռուն բանակ դրած են՝ առանց անմիջական շարժման մը նշաններ ցոյց տալու : Սակայն քանի մը ձիաւոր յառաջապահներ համարձակեցան մինչև հրացանի զինգակ հասնելու չափ մօտենալ անդիւսցւող հիւպատոսարանին : Եսկէց կը կարծուի թէ ապստամբները քաղաքին վրայ յարձակելէ առաջ կուզեն անոր մօտենալու կէտերը յառաջուց սովել :

« չոր ծովապետը Ա. ուսուցիչ պնայ, որպէս զի ապստամբներուն սպառնալ եւ տեղի կողմէն՝ երբոր ուզեն գետին ձախ կողմը ձեռք անցունել և շանկալուն ու Վիկիթէն սպառնալու աւագակաց զունդերուն հետ միանալ, որոց մօտենալը ստուգուեցաւ Օ. ինկարի շոգեմալին հրամանատարին որ անոնց դէպ ի Շանկայի գաղտնեւոր է հեռուէն :

« Բայց մեզի համար ամենէն մեծ վտանգը ասոնք չեն : Ամենէն աւելի վտանգածնիւ մեր ծառայութեանը մօտ՝ Բանթոնցիներուն ու Պօնթիքիցիներուն դաւաճանութիւնն է, իսկ ան իսկապէս կայ որ ասոնք դադանի ընկերութիւն մը կազմած են, որուն նպատակն է ներքին մեր վրայ յարձակիլ երբոր ապստամբները դուրսէն քաղաքին վրայ յարձակին : Եսանկ բան մը արդէն 1853ին Բանթոնի մէջ եղաւ խիստ աղետալ հեռեւանքներով : Եստուած պահէ մեզ անանկ սպառնալիքի գործարդութենէն մը : »

Բեքրապուրիէն մարտ 24 թուով լուր կուտան թէ տերութեան տօնադրւելի անուանի Վէտէլուս կոմսն առջի իրիկունը վախճաներ է :

Եւրոպայի քաղաքագիտաց երկրագոյնէն էր : 1802ին Ռուսիոյ արտաքին գործոց պաշտօնին մօտ և անոր քաղաքականութեանը տնօրէն եղած է դարուս պիետ երեւել քաղաքագիտական գործերուն մէջ՝ Եղեքանալը Ե. ի օրէն սխալ մինչև Ե. զեքանալը Ե. ի օրով : Երեւելեան պատերազմէն ետեւ Փարիզ դուրմարուած դեսպանագործը վերջին քաղաքագիտական մեծ գործն էր որուն մօտենակց եղաւ այս երեւել քաղաքագետը, և ան կէ ետքը պաշտօնէն քաշուեցաւ : Վէ-

տէլուտ կոմսը 1780ին ծնած էր, հետեւաբար 82 տարեկան էր վախճանած ժամանակը :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 1-ին Նիքոնակայն պար ծառայ կեցէ մայրաքաղաքէն Մեծիտիէ շոգեղաթի Զորաթիւնով Վիկիթիկա և անկէց Վեմէիկ ու Պրուսա երթալու համար :

Եւրին կայսերական վեհապառութեան ուղեկից պիտի ըլլայ նաև ծովային գործոց պաշտօնեաց բարձրագոյն Սէհմէտ Եւի փաշան :

Լոտրայէն Պրանդիորթի Ժուսնալ լրագրին գրուած նամակի մը մէջ հետեւալը կը կարդանք :

« Օսմանեան փոխառութիւնն անցեալ ուրբաթ օրը դոյուեցաւ, չորս օր բաց մնալէն ետեւ : Ստորագրութեանց գուժարը 36 միլիոն լիւրայի հասաւ :

« Բան տարիէ ի վեր Մարդիկ մէջ տեսնուած էր դրամական դործողութիւն մը որ այսպէս եռանդալին համակրութիւն դանէ հասարակութեան կողմէն և ասանկ կարգէ դուրս արդիւնք մը տայ : Այս պիտորագրուած դուրմար ուղեւած դրամագիրին քառասուկիւն աւելի է, և բուն տրուելիքէն՝ որ 5 միլիոն 440 հազար լիւրա սթեւիլէն պիտի ըլլայ՝ եօթնասուկի աւելի է :

« Եսոր հետեւանքն այն պիտի ըլլայ որ ստորագրողներն իրենց մատուցածին հնդերորդ մասը միայն տալու պիտի պարտաւորին : ուստի յայտնի կը տեսնուի թէ շատերը դժգոհ պիտի ըլլան : »

Վեմէիկայի Նիտեբանտանալդիւն ալ հետեւալ տեղեկութիւնները կուտայ Օսմանեան նոր փոխառութեան վրայ :

« Փոխառութիւնը ստորագրողներն հետեւալ կերպով պիտի տան ստակը, և արիւրին 5 ստորագրած ժամանակին հարիւրին 15 մուրհաբին ստացած ժամանակին հարիւրին 10 յառաջիկայ մարտ 15ին : հարիւրին 10 յուլիս մէկին, և այն ևայն, մինչև դալ տարուան յունվարի 1 :

« Պայմանագրով աւագարուած գումարները հարիւրին 6 աւելի տոկոս մը պիտի ստանան : Տոկոսը անցեալ յունուար 1էն պիտի հաշուի : Մայրէն վճարքը 1863 յուլիս 1ին պիտի սկսի և քանները ու կէս տարուան մէջ պիտի լինայ :

« Եւս փոխառութեան նպատակն է բոնաօրէն չեղած բայ պարտքերը բոնաօրէն ընել և յարը կողմէն թողնալու մը վերջնել : Եւրոպայի կառավարութիւնը փոխառութեան դործածութեանը համար Ա. Սալթանին ուղեկից յատուկ տեսուչ ընտրեց Լորտ Չօպարթ :

« Տաճկաստանի ընդհանուր եկամուտները և մանաւորապէս ծխախոտին ու աղէն տուրքը, դրոշմի և բաժնէն մը պիտի տուրք փոխառութեան տոկոսին և դրախտանին վճարմանը պիտի պատասխանեն :

« Մայրուն յանձնաժողով մը պիտի նստի Ա. Պրիս վեց անդամէ բաղկացեալ, որոց երեքը Օսմանեան կառավարութենէն պիտի ընտրուին և երեքն ալ փոխառութեան գործակառարներն : Եւս յանձնաժողովը վեց ամէն վեց ամիս Մարդիկ Պանքային տրուելիք գումարներուն կանոնաւոր կերպով յուղարկմանը պիտի հոգ տանի :

Գաւառներէն զրիւսած թղթագրաւ մը փոխարէն մայրաքաղաքս եկած մեծ տաղեայ դրամաց գումարն այս շաբթու 1 միլիոն 82.140 լիւրա և 48 դուրուշի հասած է :

Օգոստոսի 1-ին Նիքոնակայն առաջին կարգի Օսմանիէի ակնաւորուտ պատուանշանը շնորհեց թուրուղի կուսակալին : Երբունի սենեկապան Վեմէս պէյը քա-

նի մը օրէն ձամբայ պիտի ելէ յիշեալ կայսերական պատուանշանը և անոր հետ դարձեալ Եւրին Ա. վեհապառութեան շնորհած ակնաւորուտ ծանրա գին թուրն և Քաթիտանը Թուրուղի կուսակալին տանելու :

Վեցեալ չորեքշաբթի օգոստոսի 1-ին Նիքոնակայն անակնկալ այցելութիւն մը ըրա պատերազմի պաշտօնատան գորանոցներուն : Եւրին Ա. վեհապառութիւնը մտնաւ անապար ընեց զօրաց բոլոր նիւթական պիտոյքներուն վիճակը : Նիւթականներուն մարքութեան և առողջապահութեան պայմաններն հետազօտեց, կերած հոգիքուն և կերակուրներուն համը նշանցաւ, և վերջապէս անձամբ բտուեց որ Եւր հրամաններն ու բրած արեւօրէնութիւնները կատարեալ հաստատութեամբ ի դործ կը դրուին :

Տերութեան անուղղակի հարկաց ընդհանուր վերադասութիւնն հետեւալ պաշտօնական ծանուցումը կը հրատարակէ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

« Տերութեան երկիրներուն մէջ ընչաւ խոտին և ամեն կերպ ընդիմակռնողներ շինութիւնը ծխախոտին ընդհանուր մեծութեամբ Օսմանեան մասն բլալով : այս արտօնութիւնը աճուրդով վարձակալութեան պիտի տրուի :

« Արդեալ ժամանակի մը համար վարձակալութեան առաջարկութիւններն ու պայմանները Ա. Պրիս մարտատուեր նրաւ տող աննուդղակի հարկաց խորհուրդին պէտք է ներկայացուի դրով, ներկայ ծանուցման հրատարակուելէն մինչև քսան և մէկ օր :

« Օտար տերութեանց հպատակները Օսմանեան հպատակ փառհեր երաշխաւոր մը ցուցնելով կրնան այս արտօնութեան վարձակալութեանը ձեռնամուր ըլլալ :

« Եւս վարձակալութեան վերաբերեալ առաջարկութիւնները տերութեան բոլոր երկիրներուն համար միայն պիտի ընդունուին :

« Վճարքը այն ժամանակի պիտի ըլլայ երբոր առաջարկութիւններն ընդունուի երկին : »

Ա. Պրիս 19/50 մարտ

1862

ԱԶԳԱՅԻՆ

Երգային դպրոցներէն շատերուն ողբալի վիճակը ցաւօք արի տեսած ժամանակին ու ստիպաւ միթիւտութեան առիթ է անոնց ալ բարեկարգ և արդիւնաւոր վիճակը տեսնել կամ խմանալ : Իւ ինչպէս որ առաջիններուն վրայ բարեպետ հասարակութեան ցաւակցութիւնը հրաւիրել և հոգաբարձութեանը անոնց անարդարանալի անհոգութիւնը մեղադրել նուիրաւ կան պարար մը կը ձանձնանք մեզ, անանկ ալ վերջիններուն վրայ իր ուրախակցութիւնը հրաւիրել և առիթ եղողներուն արդիւնքն ու անձնաւորութիւնները դուրսէն հոգիել նոյնպէս անհրաժեշտ պարտաւորութիւն մը կը համարինք :

Գումարաւորի դուրս արքատարակութեան երկու տեղի վարժողներուն վիճակը վերջին միթիւտական քաղցր պարտականութիւնը կը դնէ մեր վրայ : Բարեւ ջան հոգաբարձուներ, հմուտ և աշխատաւոր ուսուցիչներ, ուսուցիչներ և ու չեմ մանկուղի կիրակի օրը զմայրելի տեսարան մը ընծայեցին յիշեալ թաղին մէջ :

Շահերատայ և աշակերտու հետց ուսմանքները նախնիքաց երկու շաբթիւնը լուրն մէջ ազգիս գլխաւոր դասատուներն և ուրիշ հմուտ ուսումնականներէ անաւագաւոր քննուած ըլլալով, անոնց արուած գոհութեան վկայութիւններուն համեմատ՝ կիրակի առտու յիշեալ թաղին երկրեցւոյն մէջ պարգեւաբաշխութեան հանդէս կատարուեցաւ ի ներկայութեան բարձրութիւն ուսուցիչներ և ուսուցիչներ

Կ. ՊՕԼԻՍ ՋԻՆԻԼԻ ԻԱՆ